

ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը ինսպիրատուրական կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեազրության համար: **Թեստ-գրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մայթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

(1-4) Կատարել առաջադրանքները.

**1** Ո՞ր թիվը 25-ի բաժանելիս քանորդում կստացվի 8, իսկ մնացորդում՝ 10:

- 1) 150
- 2) 200
- 3) 210
- 4) 215

**2** Գտնել 70 և 90 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

- 1) 783
- 2) 180
- 3) 630
- 4) 720

**3** Նշված թվերից ո՞րը ամբողջ թվի քառակուսի չէ.

- 1) 361
- 2) 625
- 3) 15642
- 4) 1024

**4** Քանի՞ քառակուսի մետր է մեկ հեկտարը:

- 1) 100
- 2) 1000
- 3) 10000
- 4) 1000000

(5-8)Գտնել արտահայտության արժեքը.

**5**       $\frac{3}{2} - \frac{1}{2} \left( 3 + \frac{2}{3} \right)$

- 1)  $\frac{1}{3}$
- 2)  $-\frac{1}{3}$
- 3)  $\frac{11}{3}$
- 4)  $-1$

**6**       $64^{\frac{1}{2}}$

- 1) 1
- 2) 2
- 3) 4
- 4) 8

**7**       $\log_5 75 - \log_5 3$

- 1) 3
- 2) 2
- 3)  $\log_5 72$
- 4)  $\log_5 78$

**8**       $\arctg 1 + \arcsin 1$

- 1)  $\frac{5\pi}{12}$
- 2)  $\frac{7\pi}{12}$
- 3)  $\frac{3\pi}{4}$
- 4)  $-\frac{\pi}{4}$

**(9-12) Լուծել հավասարումը**

**9**  $2(x-2,5)=13$

- 1) 4
- 2) 9
- 3) -9
- 4) -4

**10**  $\left|2-\frac{3}{4}x\right|=3$

- 1) -3 և 3
- 2)  $\frac{20}{3}$
- 3)  $\frac{4}{3}$
- 4)  $-\frac{4}{3}$  և  $\frac{20}{3}$

**11**  $\log_{0,2}(x-1)=-2$

- 1) 2
- 2) 26
- 3)  $(1; +\infty)$
- 4)  $1-\sqrt[5]{2}$

**12**  $5^{x^2+x}=25$

- 1) -1 և 2
- 2) -2 և 1
- 3)  $\frac{1 \pm \sqrt{21}}{2}$
- 4)  $\emptyset$

(13-16) Լուծել անհավասարությունը.

13  $2(x+1) \geq 3(2-x)$

- 1)  $(-0,8; +\infty)$
- 2)  $\left(-\infty; \frac{4}{5}\right)$
- 3)  $\left[-\frac{4}{5}; +\infty\right)$
- 4)  $\left[\frac{4}{5}; +\infty\right)$

14  $|x-5| \leq 4$

- 1)  $(1; 9]$
- 2)  $(-\infty; 9]$
- 3)  $[1; 9]$
- 4)  $[1; 9)$

15  $\sqrt{2x-5} \geq 3$

- 1)  $(-\infty; 7]$
- 2)  $[7; +\infty)$
- 3)  $[4; +\infty)$
- 4)  $\left[\frac{5}{2}; +\infty\right)$

16  $3^{x+7} \geq 81$

- 1)  $(-\infty; +\infty)$
- 2)  $(-\infty; -3]$
- 3)  $(-3; +\infty)$
- 4)  $[-3; +\infty)$

(17-20) Դասարանում կա 15 աշակերտ, որոնց 20%-ը գերազանցիկ են:  
Դասարանի տղաները 3-ով պակաս են աղջիկներից:

**17** Քանի՞ տղա կա դասարանում:

- 1) 6
- 2) 9
- 3) 12
- 4) 8

**18** Գտնել դասարանի գերազանցիկ աշակերտների թիվը:

- 1) 3
- 2) 5
- 3) 6
- 4) 12

**19** Գտնել դպրոցի աշակերտների թիվը, եթե այդ դասարանի աշակերտների թիվը  
դպրոցի աշակերտների թվի  $\frac{3}{40}$  մասն է:

- 1) 200
- 2) 300
- 3) 400
- 4) 500

**20** Քանի՞ գերազանցիկ աղջիկ կա դասարանում, եթե տղաների  $\frac{1}{3}$ -ն են գերազանցիկ:

- 1) 1
- 2) 2
- 3) 4
- 4) 3

(21-24) Կատարել առաջադրանքները.

**21** Գտնել  $10; x; 4; \dots$  թվաբանական պրոգրեսիայի երկրորդ անդամը:

- 1) 7
- 2) 6
- 3) 5
- 4) 8

**22** Գտնել  $10; x; 4; \dots$  թվաբանական պրոգրեսիայի ամենամեծ բացասական անդամը:

- 1) -1
- 2) -2
- 3) -3
- 4) -4

**23** Գտնել  $2; 8; 32; \dots$  երկրաչափական պրոգրեսիայի հայտարարը:

- 1) 2
- 2) 4
- 3)  $\frac{1}{4}$
- 4) 8

**24** Գտնել  $2; 8; 32; \dots$  երկրաչափական պրոգրեսիայի բոլոր այն անդամների գումարը, որոնք եռանիշ թվեր են:

- 1) 896
- 2) 640
- 3) 650
- 4) 512

(25-28) Տրված է  $f(x) = x^2 - x$  ֆունկցիան:

25

Գտնել  $f$  ֆունկցիայի ածանցյալը  $x=2$  կետում:

- 1) 0
- 2) 3
- 3) 4
- 4) 2

26

Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը  $[-1; 1]$  միջակայքում:

- 1)  $-\frac{1}{4}$
- 2) 1
- 3) 0
- 4) 2

27

Գտնել  $f$  ֆունկցիայի փոքրագույն արժեքը:

- 1)  $-\frac{1}{4}$
- 2) -1
- 3) 0
- 4) չունի

28

Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերը:

- 1) 0 և 1
- 2)  $\frac{1}{2}$
- 3) 1
- 4) չունի

(29-32)  $ABC$  հավասարասուն եռանկյան  $B$  գագաթի անկյունը  $120^{\circ}$  է, իսկ սրունքի երկարությունը՝  $12\sqrt{3}$

29 Գտնել եռանկյան հիմքին առընթեր անկյան աստիճանային չափը:

- 1)  $60^{\circ}$
- 2)  $150^{\circ}$
- 3)  $180^{\circ}$
- 4)  $30^{\circ}$

30 Գտնել եռանկյան արտաքին անկյունների գումարը (յուրաքանչյուր գագաթում վերցնել մեկական արտաքին անկյուն):

- 1)  $180^{\circ}$
- 2)  $360^{\circ}$
- 3)  $90^{\circ}$
- 4)  $60^{\circ}$

31 Գտնել  $B$  գագաթից տարված բարձրության երկարությունը:


- 1) 118
- 2)  $12\sqrt{3}$
- 3)  $6\sqrt{3}$
- 4) 6

32 Գտնել եռանկյան հիմքի երկարությունը:

- 1)  $18\sqrt{3}$
- 2) 18
- 3)  $36\sqrt{3}$
- 4) 36

(33-36) Կանոնավոր եռանկյուն պրիզմայի քարձրությունը 3 սմ է, հիմքի կողմը՝ 4սմ:

33 Հետևյալ պատկերներից ո՞րն է համապատասխանում խնդրում նշնած պայմանին.



34 Գտնել պրիզմայի կողմնային մակերեսույթի մակերեսը:

- 1)  $12 \text{ սմ}^2$
- 2)  $24 \text{ սմ}^2$
- 3)  $48 \text{ սմ}^2$
- 4)  $36 \text{ սմ}^2$

35 Գտնել պրիզմայի ծավալը:

- 1)  $20,78 \text{ սմ}^3$
- 2)  $4\sqrt{3} \text{ սմ}^3$
- 3)  $12\sqrt{3} \text{ սմ}^3$
- 4)  $8\sqrt{3} \text{ սմ}^3$

36 Գտնել պրիզմայի կողմնային նիստի անկյունագծի երկարությունը:

- 1) 5 սմ
- 2) 5,5 սմ
- 3)  $5\sqrt{3}$  սմ
- 4) 4 սմ

(37-40)  $A(-2; 1)$ ,  $B(1; 5)$ ,  $C(4; 1)$ ,  $D(1; -3)$  կետերը  $ABCD$  շեղանկյան գազաքներն են:

- 37** Գտնել շեղանկյան անկյունագծերի հատման կետի աբսցիսը:
- 38** Գտնել շեղանկյան կողմի երկարությունը:
- 39** Գտնել  $\overrightarrow{BD}$  և  $\overrightarrow{AC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:
- 40** Գտնել  $\overrightarrow{AD}$  և  $\overrightarrow{CB}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

$$(41-44) \text{ Տրված է } \log_3 \frac{5x-21}{8} < 2 \text{ անհավասարումը:}$$

- 41** Ո՞րն է անհավասարման ԹԱՔ-ին պատկանող ամենափոքր ամբողջ թիվը:
- 42** Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամենամեծ ամբողջ թիվը:
- 43** Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող ամբողջ թվերի քանակը:
- 44** Գտնել անհավասարմանը բավարարող պարզ թվերի քանակը:

**Ծի՞շտ են,քե՞զ սխալ հետևյալ պնդումները.**

- 1) 0-ից տարբեր երկու թվերի արտադրյալի հակադարձը հավասար է այդ թվերի հակադարձների արտադրյալին:
- 2) Կանոնավոր կոտորակի հակադարձը անկանոն կոտորակ է:
- 3) Ցանկացած երկու թվերի արտադրյալի հակադիր թիվը հավասար է այդ թվերի հակադիր թվերի արտադրյալին:
- 4) Ցանկացած երկու բաղադրյալ թվերի գումարը բաղադրյալ թիվ է:
- 5) Եթե բնական թիվը բաժանվում է և՛ 4-ի, և՛ 6-ի, ապա այն բաժանվում է 24-ի:
- 6) Եթե ցանկացած սովորական կոտորակի համարիչին և հայտարարին գումարենք 1, ապա կոտորակը կմեծանա:

## **Բ մակարդակ**

(46-49) Ավտոբուսը ժամը 9<sup>30</sup>-ին դուրս էր եկել A վայրից և նախատեսել էր ժամը 14<sup>30</sup>-ին հասնելք A-ից 300 կմ հեռավորության վրա գտնվող B վայր:

- 46** Քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է ընթանա ավտոբուսը՝ ժամանակին B վայրը հասնելու համար:
- 47** A վայրից քանի՞ կմ հեռավորության վրա կգտնվի ավտոբուսը ժամը 11<sup>00</sup>-ին:
- 48** Շարժումը սկսելուց քանի՞ րոպե հետո ավտոբուսը կգտնվի A-ից 80 կմ հեռավորության վրա:
- 49** Եթե ժամը 11<sup>30</sup>-ին ավտոբուսը կես ժամ կանգ առնելք, այնուհետև քանի՞ կմ/ժ արագությամբ պետք է շարունակել ճանապարհը, որպեսզի ժամանակին հասնելք B վայրը:

(50-53)  $r = 2$  շառավղով շրջանագծին արտագծած է ուղղանկյուն սեղան, որի ամենափոքր կողմի երկարությունը 3 է:

**50** Գտնել սեղանի մեծ սրունքի երկարությունը:

**51** Գտնել սեղանի մեծ հիմքի երկարությունը:

**52** Գտնել սեղանի փոքր անկյունագծի երկարությունը:

**53** Գտնել սեղանի մակերեսը:

**(54-57) Գտնել արտահայտության արժեքը**

**54**  $\log_3(4 \cdot \log_4 5 \cdot \log_5 27)$

**55**  $\sqrt{(20-x)(10+x)},$  եթե  $\sqrt{20-x} - \sqrt{10+x} = 4$

**56**  $\sin^2 75^\circ + \sin^2 195^\circ$

**57**  $f(-2)$ -ը, եթե  $f$  -ը  $(-\infty; +\infty)$ -ում որոշված, 6 հիմնական պարբերությամբ  
ֆունկցիա  $f,$  ընդ որում՝  $f^2(4) - 10f(4) + 25 = 0$

(58-61) Տրված է  $x^4 - 18x^2 + b - 1 = 0$  հավասարումը ( $b$  -ն պարամետր է):

58  $b$  -ի ի՞՞նչ արժեքի դեպքում  $x = -\sqrt{3}$  թիվը կլինի հավասարման արմատ:

59 Գտնել հավասարման արմատների գումարը  $b = 15$  արժեքի դեպքում:

60  $b$  -ի ի՞՞նչ արժեքի դեպքում հավասարումն ունի ճիշտ երեք արմատ:

61 Գտնել  $b$  -ի ամենամեծ բնական արժեքը, որի դեպքում հավասարումն ունի չորս արմատ:

(62-63) Շախմատի մրցաշարում, որում ամեն նասնակից մյուսներից յուրաքանչյուրի հետ պետք է անցկացնի մեկ խաղ, մասնակցում են 7 գրոսմայստեր և 4 վարպետ:

**62** Քանի՞ խաղ կկայանա, եթե մրցակիցներից մեկը գրոսմայստեր է, մյուսը՝ վարպետ:

**63** Քանի՞ եղանակով է հնարավոր մասնակիցներից կազմել թիմ, որում լինեն 3 գրոսմայստեր և 2 վարպետ:

**64**

Տրված են  $f(x) = 4^{|2x-1|}$  և  $g(x) = \sin(\pi x)$  ֆունկիաները:

- 1)  $g$  ֆունկիան կենտ է:
- 2)  $f$  ֆունկիան զույգ է:
- 3) 3-ը  $g$  ֆունկիայի պարբերություն է:
- 4)  $E(f) = (1; +\infty)$ :
- 5)  $f(x) < g(x)$  անհավասարումը լուծում չունի:
- 6)  $f$  և  $g$  ֆունկիաների զուածքներն ունեն մեկ ընդհանուր կետ:

**65**

*SABCD* բուրգի հիմքը *ABCD* քառակուսին է: *SB* կողն ուղղահայաց է հիմքի հարթությանը: Կողմնային նիստերից երկուսը հիմքի հարթության հետ կազմում են  $45^0$  անկյուն:

- 1) *SBD* հարթությունն ուղղահայաց է բուրգի հիմքի հարթությանը:
- 2) *SD* կողը հիմքի հարթության հետ կազմում է  $45^0$  անկյուն:
- 3) *AC* ուղիղն ուղղահայաց է *SBD* հարթությանը:
- 4) *D* կետի հեռավորությունը *SAB* նիստի հարթությունից փոքր է *AD* կողի երկարությունից:
- 5) *A* կետի հեռավորությունը *SCD* հարթությունից հավասար է *SA* կողի երկարության կեսին:
- 6) *AD* կողով անցնող հարթությամբ կամայական հատույթն ուղղանկյուն սեղան է: